

# ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ԼԵԶՈՒԱՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Մխիթարեան միաբանութեան երեքհարիւրամեայ գործունէութեանը նուիրուած սոյն գիտաժողովը եւս իմաստուն պատեհութիւն է գրական հայերէնի երկու տարբերակների կանոնարկման արդի ինդիւրներին վերստին անդրադառնալու տեսակէտից: Լեզուների պատմութիւնը ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր առանձին լեզու իր զարգացման շրջադարձային փուլերում այս կամ այն չափով ունեցել է արտաքին միջամտութեամբ պայմանաւորուած կանոնարկման կարիք եւ անհրաժեշտութիւն: Ի թիւս գիտական, մշակութային եւ կրթական այլ կազմակերպութիւնների Մխիթարեան միաբանութեան գործիչները բոլոր ժամանակներում այս տեսակէտից եւս ծաւալել են անխոնջ եւ անկասելի գործունէութիւն:

Եւ արդէն քանի տասնամեակ է, որ այդ գործունէութիւնը թէ՛ օտար հայագէտների եւ թէ՛ մեր ազգի գիտնականների աշխատանքներում գնահատուած է մեծ երախտագիտութեամբ եւ խորին ակնածանքով: Հայոց լեզուի պատմութեան, հայերէնի համեմատական քերականութեան, գրական հայերէնի հին եւ նոր տարբերակների, ինչպէս նաեւ գրական լեզուի եւ բարբառների փոխյարաբերութեան հարցերի պարզաբանումն ու վերլուծութիւնը, առաւել եւս գնահատութիւնը տարբեր ժամանակներում այս կամ այն չափով առընչում են Մխիթարեան հայագէտների տեսակէտներին եւ հայեացքներին, որոնք յաճախ եղել են եւ մնում են անչղանցելի, ըստ ամենայնի ուշադրութեան արժանի:

Այնքան էլ հեշտ չէ սեղմ շարադրանքով անդրադառնալ հայ մշակոյթի կարեւորագոյն օջախ Մխիթարեան միաբանութեան լեզուամշակութային գործունէութեանը, ուստի տուեալ

դէպքում մենք մտածում ենք ներկայացնել նրանց յիշեալ բնագաւառին վերաբերող աշխատանքներում կիրառած սկզբունքները, ինչպէս նաեւ այն հարցը, թէ այդ սկզբունքները որքանով են արդիական եւ անհրաժեշտ նոր գրական հայերէնի կանոնարկման, յետագայ մշակման ու կատարելագործման առումով:

Մխիթարեանների երեւոյթը, պատկերաւոր ասած, մեզանում յիշեցնում է այն առասպելական թռչունին: Հնդեւրոպական ժողովուրդների աւանդութիւններում պատմում է, որ եղել է անհասանելի ու անիմանալի, լուսեղէն ու շողշողուն մի թռչուն: Հայկական աւանդոյթով դա ոսկեփետուր թռչունն է, որը մեզանում յետագայ անունն է կրում՝ հազարան բլբուլ:

Յովհ. Թումանեանն իր կեանքի գրեթէ ողջ ընթացքում երազեց մշակել այդ թռչունի պատմութիւնը, այդ թեմայով հաւաքեց հազար ու մի տարբերակ, ուսումնասիրեց հարիւր ու մի պատմութիւն, հէքիաթ ու առասպել, գրեց տասնեակ ու մի տարբերակ՝ իբրեւ մշակում հնագոյն ժամանակներից եկող այդ առասպելի («պատումի»): Ղ. Աղայեանը գրեց ու իր աւարտին հասցրեց իր «Հազարան բլբուլը»: Վերջինս աւարտուն է, սակայն թոյլ ու սովորական: Վերջինս արդէն քանի-քանի տարիներ ընթերցում ենք, վերընթերցում, եւ մեզ միշտ պատում է այն զգացումը, թէ ուր էր, թէ իր աւարտին հասնէր ու ամբողջանար Յովհ. Թումանեանի «Հազարան բլբուլը»: Թումանեանի կիսատն անպայման ձգում է, իսկ Աղայեանինը՝ մշտապէս ընթերցում:

Մխիթարեանների վաստակն ու եռանդը մեզանում մշտապէս մեկնաբանւում է ու գովաբանւում, արժանանում ամենայն դրուատանքի, սակայն չենք հասնում մեր մշակոյթի այդ ոսկեփետուր թռչունին:

Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեանների լեզուամշակման սկզբունքներին, արծարծած հայերէնագիտական խնդիրներին անդրադարձել ենք տարիների ընթացքում գրած մեր առանձին գրքերում եւ գիտական յօդուածներում<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Վ., ԺԸ դարի առաջին կեսին տպագրուած երկու գրքի մասին, «Լրաբեր Հասարակական գիտութիւնների», 1981, 3, էջ 63-72, նոյնի՝ Գրաքարի լատիմատիպ նորամուծութիւնների յարթահարուստ ԺԸ դարում, «Լրաբեր Հասարակական գիտութիւնների», 1982, 8, էջ 63-72, նոյնի՝ ԺԸ-ԺԹ դարերի գրաքար պատմագրութեան լեզուական

Այնուհետև, այդ բնագաւառի որոշ հարցերի վերաբերեալ կարդացել ենք զեկուցումներ, գրել գիտական ատենախօսութիւն<sup>2</sup>: Եւ դրանցում հիմնականում հանդէս ենք բերել նոր մօտեցում, կատարել ենք համապատասխան փաստերի եւ լեզուական անհամեմատ մեծ թուով իրողութիւնների վրայ հիմնուած վերլուծութիւն: Փորձել ենք ընդարձակել փաստական տուեալները եւ դրանք քննարկել աւելի մանրամասն, ուստի ըստ հնարաւորին անկողմնակալ ձեւով:

2. Եւ այդուհանդերձ, այժմ հակուած ենք մտածելու, որ հայերէնագիտութեան այս բնագաւառում դեռեւս կան շատ անելիքներ: Կարծում ենք, որ Միլիթարեանների հրապարակ հանած գրական յուշարձանները մինչեւ այժմ հեռու են լեզուական փաստերի վրայ հիմնուած մանրամասն, եթէ չասենք ըստ ամենայնի ուսումնասիրուած եւ գնահատուած լինելուց:

Նկատենք նաեւ, որ նախկինում այդ յուշարձանները քննութեան են առնուել խիստ ընտրանքով, դրանցում եղած լեզուական իրողութիւնները վերլուծութեան են արժանացել ակնարկի ձեւով, ընդհանուր գծերով: Այժմ խնդիրը բոլորովին այլ է: Նախ՝ անհրաժեշտ է մանրակրկիտ ձեւով ուսումնասիրել գրական բոլոր յուշարձանները (տպագրուած գրքեր, հրապարակուած մամուլ եւ այլն), այնուհետև՝ դրանցում պարփակուած լեզուական իրողութիւնները վերծանել եւ գնահատել հայոց լեզուի պատմութեան ընդհանուր դրուածքի մէջ, յատկապէս գրական հայե-

բնութագիրը,- «Պատմա-բանասիրական հանդէս», 1984, 1, էջ 73-82, նոյնի՝ ԺԸ դարի գրաբար մաթեմատիկական տերմինաբանութիւնը,- «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1986, 3, էջ 70-78, նոյնի՝ ԺԸ-ԺԹ դարերի գրաբարի ձեւաբանական առանձնայատկութիւնները,- «Պատմաբանասիրական հանդէս», 1988, 1, էջ 11-12, նոյնի՝ ԺԸ-ԺԹ դարերի գրաբար մարտասանական երկերի տերմինաբանութիւնը,- «Հայոց լեզուի պատմութեան հարցեր», պրակ 2, Երեւան, 1985, էջ 257-317, նոյնի՝ Գրաբարի գործառութիւնը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երեւան, 1990:

2 Տե՛ս ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Վ., ԺԸ-ԺԹ դդ. գրաբարի մարտասանական տերմինաբանութիւնը, «Միջազգային հայերէնագիտական գիտաժողով (զեկուցումներ)», Երեւան, 1984; էջ 352-358, նոյնի՝ Վրթամէս Զալըխեանը եւ «դասական հայերէնը», «Հայերէնագիտական միջազգային երկրորդ գիտաժողով (զեկուցումների դրոյթներ)», Երեւան, 1987, էջ 97-98, նոյնի՝ Հ. Վրթամէս Զալըխեանը եւ վիեճակական հայերէնագիտութիւնը, «Հանդէս ամսօրեայ» 1995, յունուար-դեկտեմբեր, էջ 361-379,

ընդի երկու տարբերակների առընչութիւնների տեսակէտից: Եւ կարծում ենք, որ միայն այդ դէպքում եզրակացութիւնները կարող են լինել առաւել խոստովանալից, հայերէնագիտութեան արդի մակարդակին բաւարարող:

Այսպէս, Ժ. Բ. Բոսուէի «*Խօսք ընդհանուր պատմութեան վերաբերեալ*» գիրքը վեներտիկեան եւ վիեննական Մխիթարեանները Ֆրանսերէնից թարգմանել եւ լոյս են ընծայել նոյն 1841 թուին: Թարգմանութեան երկու տարբերակների լեզուական համեմատութիւնը ցոյց է տալիս, թէ ինչպիսի մօտեցում են հանդես բերել այդ երկու դպրոցի ներկայացուցիչները գրաբարի մշակման ու գրական կանոնարկման հարցերում<sup>3</sup>: Այնուհետեւ, Ժ. Ռասինի «*Գոթողիա*» երկը թարգմանուել է Արս. Բագրատունու եւ Գ. Հիւրմիւզեանի ձեռքով եւ սպազրուել գրեթէ նոյն ժամանակում. տարբեր թարգմանիչների լեզուական ճաշակի եւ գրաբարի վերաբերեալ ունեցած մօտեցումների առումով բաւականին հետաքրքիր պիտի լինէր այդ թարգմանութիւնների լեզուական համեմատութիւնը<sup>4</sup>: Նշենք նաեւ Հուգոն Փոսկոլէոսի «*Տաղ գերեզմանական*» երկի թարգմանութիւնը վեներտիկցի յիշածս երկու Հայրերի, ինչպէս նաեւ Յար. Մրմրեանի ձեռքով. այս դէպքում եւս ակնյայտօրէն բախուում ենք լեզուական ուրոյն մօտեցումների, բառի եւ լեզուական այլ ձեւերի գործածութեան առանձնայատկութիւնների հետ<sup>5</sup>: Մեր աշխատանքներում յիշեալ եւ նման կարգի միւս թարգմանութիւնների ընթացքում վեներտիկեան եւ վիեննական հայրերի գործադրած լեզուամշակութային սկզբունքներին եւ մօտեցումներին անդրադարձել ենք ոչ ամբողջական ձեւով՝ կապուած միայն այս կամ այն աշխատանքի սոսկ ծաւալի յարուցած դժուարութեան հետ: Ուստի եւ կարծում ենք, որ Մխիթարեան հայագէտների ոչ միայն ինքնուրոյն երկերի, այլեւ կատարած թարգմանութիւնների լեզուական ուսումնասիրութիւ-

3 Աւելի մանրամասն տես՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Վ., Գրաբարի գործառութիւնը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 52-56:

4 Հմմտ. Գոթողիա, Ողբերգութիւն Յ. Ռասինի, թարգմ. Գ. Հիւրմիւզեան, *Վեներտիկ*, 1864, Ռասին, Գոթողիա (տես՝ «Ճաշակի հիմ եւ Ար ողբերգութեան», թարգմ. Ա. Բագրատունույ, *Վեներտիկ*, 1869):

5 ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Վ., Գրաբարի գործառութիւնը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 97-127:

նը մեծապէս կարող է ուղեցոյց հանդիսանալ նոր գրական հայերէնի պատմութեան լայն ուսումնասիրութեան համար, միաժամանակ հիմքեր ստեղծել ձեռնամուխ լինելու լեզուական այդ վիճակի երկու տարբերակների յետագայ նկարագրութեան, ինչպէս նաեւ գրական միասնականացման գործին: Վերջին դէպքում նկատի ունենք նոր գրական հայերէնի թէ՛ հնչիւնական համակարգի եւ թէ՛ բառապաշարի ու քերականութեան կանոնարկման հետ կապուած խնդիրների լուծումն ու դժուարութիւնների յաղթահարումը:

Մեր օրերում Մխիթարեան գործիչների լեզուագիտական վաստակն ուշադրութեան է արժանի նաեւ մէկ այլ տեսակէտից: Թէ՛ հեռու եւ թէ՛ մօտիկ անցեալում, ով այս կամ այն առիթով շփուել է նրանց գործունէութեան հետ (օրինակ՝ Զորջ Բայրոն, Յ. Գ. Լայքնից եւ ուրիշներ), ով այս կամ այն չափով օգտուել է նրանց լեզուամշակութային նուաճումներից (օրինակ՝ Հ. Պետերման, Հ. Հիւբշման, Ա. ՄեյՅ, ինչպէս նաեւ Միք. Նալբանդեան, Մ. Աբեղեան, Հ. Աճառեան եւ ուրիշներ), խորին ակնածանքով՝ խորաթափանց ձեւակերպումներով են գնահատել նրանց նուիրումն ու վաստակը՝ թէ գիտական, կրթական եւ թէ՛ լեզուամշակութային գործունէութեան առումով: Այսպէս, Մ. Աբեղեանը գրում է հետեւեալը. «Նրանք հրապարակը լցնում են իրենց գրական աշխատանքներով եւ թարգմանութիւններով, աւելի շատ գրքերով, քան կարդացողներ կային, եւ շատ շատ աւելի, քան հասկացողներ»<sup>6</sup>: Ըստ այսմ կարծում ենք, որ անցեալի հայերէնագէտների ուսումնասիրութիւնները եւ տեսական նկատառումները մեծապէս կարող են նպաստել Մխիթարեանների լեզուագործունէութիւնը ճիշտ գնահատելու, այս առումով ստեղծուած աւանդույթը պատշաճ մակարդակով նկատի ունենալու գործում:

Այսպէս, ժամանակին հայերէնի ուսուցում ստանալով վենետիկեան հայրերից՝ Հ. Պետերմանը գրում է մի շարք աշխատութիւններ, այդ թւում նաեւ լեզուաբանական հետազոտութիւններ, որոնցով որոշակի նպաստ է բերում հայոց լեզուի պատմահամեմատական ուսումնասիրութեան գործին<sup>7</sup>: Ա. ՄեյՅն ոչ միայն

6 ԱՐԵՂԵԱՆ Մ., Երկեր, 4. Դ, Երեւան, 1970, էջ 549:

7 PETERMANN H., *Grammatica linguae armeniacae*, Berolini, 1837; Idem, *Beitrage zur der Geschichte Kreuzzuge aus Armenischen Quellen*, Berlin, 1860.

այդ առումով, այլեւ «Դասական հայերէնի համեմատական քերականութեան ուրուագիծ» աշխատանքը գրելիս ամէնից առաջ նկատի է ունեցել Վրթ. Չալրխեանի «Քերականութիւն հայկագնեան լեզուի» (աշխատասիրութեամբ Ա. Այտընեանի) խիստ իւրօրինակ դասագիրքը<sup>8</sup>: Աւելին, «Նոր բառգիրք հայկագեան լեզուի» (ՀՀ. 1-2, Վենետիկ, 1836-1837) աննման աշխատութիւնը, ի թիւս այլ հետաքրքիր կողմերի, պարունակում է բառերի եւ արմատների ստուգաբանութիւններ («մեկնութիւններ» կամ համեմատութիւններ), որոնք յետագայ ուսումնասիրողների կողմից կամ օգտագործուել են, կամ հիմք հանդիսացել աւելի հաւաստի ստուգաբանութիւնների համար: Այս առումով մենք շատ բարձր ենք գնահատում այդ բառարանը՝ աւելացնելով՝ որ այն հայոց լեզուի պատմահամեմատական հետազոտութեան պատմութեան համար ունի ուրոյն նշանակութիւն եւ արժանի է առանձին ուսումնասիրութեան:

4. Մխիթարեաններն իրենց լեզուագործունէութիւնը ծաւալել են իրենց իսկ մշակած սկզբունքներով, որոնք տասնամեակներ շարունակ դարձել են ոչ միայն գրաբարի «այլեւ նոր գրական հայերէնի (յատկապէս գրական արեւմտահայերէնի) ուսումնասիրման, ինչպէս նաեւ կանոնարկման նպատակով մշակման ու կատարելացման հիմունքները:

Ինչպէս վենետիկեան, այնպէս էլ վիեննական հայերէնագէտներն այս հարցում գնացել են իրենց ուսուցչի՝ Մխիթար Սեբաստացու նախանշած ճանապարհով: Առաջիններն ըստ ամենայնի հաստատուն պահեցին, այլեւ մաքրագործեցին այդ ճանապարհը: Նկատի ունենք այն հանգամանքը, որ նրանք ամենայն փայփայտմով մաքրեցին հին գրական հայերէնով գրուած մատենագրութեան մէջ յետագայ դարերի ընթացքում ներթափանցած վրիպումներն ու գրչագրական սխալանքները, ճիգ ու եռանդ գործադրեցին հաւանական ճիշտ ձեւերն ու ձեւակերպումները վերականգնելու համար: Իսկ երկրորդները ոչ միայն հետամուտ եղան այդ սկզբունքին, այլեւ ընդարձակեցին այդ ճանապարհը: Այս դէպքում էլ նկատի ենք առնում այն հանգամանքը, որ նոր գրական լեզուի ընտրութեան, ինչպէս նաեւ վերջինիս մշակման

<sup>8</sup> MEILLET A., *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique* (seconde édition entièrement remaniée), Vienne, 1936.

ու կատարելագործման առումով նախապատուութիւնը փորձեցին տալ հին գրական հայերէնի դասական վիճակին:

Այնուհետեւ, վենետիկեան Մխիթարեաններն անուրանալի դեր խաղացին լատինաբանութեան յաղթահարման գործում, իսկ վիեննականները շրջադարձային մօտեցում հանդէս բերեցին հին գրական հայերէնի դասական եւ ոչ դասական վիճակների տարբերակման եւ բնութագրման առումով: Այս հարցում նրանք առաջնորդուում էին ժամանակի ոչ միայն բանասիրական-բնագրագիտական, այլեւ լեզուաբանական-բառագիտական չափանիշներով: Եւ ուզում ենք շեշտել, որ հայոց լեզուի պատմութեան, հայերէն գրական յուշարձանների բնագրային վերականգնումների տեսակէտից հայերէնագիտական ոչ մի այլ դպրոց չի արել այն, ինչ պատուախնդրօրէն, Չերմեռանդօրէն գլուխ են բերել Մխիթարեան բանասէրներն ու լեզուաբանները:

Եւ վերջապէս, նկատի ենք ունենում այն, որ նոր գրական հայերէնի հարստացման ու կատարելացման մէջ Մխիթարեանները մեծ տեղ էին տալիս գրաբարի մասնակցութեանը՝ գտնելով, որ մատենագրական հարուստ ավանդոյթ ունեցող հին գրական լեզուն մեծապէս կարող է նպաստել գրական կանոնարկման ուղին բռնած նոր հայերէնի ձեւաւորմանն ու յետագայ զարգացմանը:

Ուստի Մխիթարեանների լեզուամշակման սկզբունքների գործադրումը պէտք է տեսնել մի կողմից՝ լատինաբանութեան յաղթահարման, միւս կողմից՝ հին գրական հայերէնի ներսում դասական վիճակի յայտնաբերման եւ վերականգնման, եւ մէկ այլ կողմից՝ հին գրական հայերէնի արժէքաւոր գծերը նոր գրական հայերէնին փոխանցելու, այլեւ վերջինս ըստ այդմ կանոնաւորելու եւ կայունացնելու մէջ:

Յիշեալ հանգուցային խնդիրների լուծման ընթացքում գործադրուած սկզբունքները եղել են միանգամայն ճիշտ, մեր լեզուի զարգացման ավանդոյթով հիմնաւորուած: Եւ ինչպէս հայոց լեզուի պատմութեան փաստերն են ցոյց տալիս, նոր գրական լեզուի զարգացումը հիմնականում ընթացաւ նման ճանապարհով՝ մշտապէս սնուելով ու ամրապնդուելով հին գրական լեզուի երակներէից, անընդհատ հարստանալով ու կատարելագործուելով:

այդ հին լեզուի քերականական միջոցների ու եղանակների գործադրումով բացատրուող ձեւերով եւ կիրառութիւններով:

Ըստ այսմ, կարծում ենք, որ արդէի գրական հայերէնի յետադայ կանոնարկման, թերեւս նաեւ միասնականացման դէպքում առաջին հերթին պէտք է հաշուի առնել նաեւ Մխիթարեան դպրոցի գործիչների արածը, նկատի ունենալ նրանց լեզուամշակման սկզբունքները: Մխիթարեանների փորձը եւ արածը մեծապէս արժէքաւոր են, որոնց վրայ կարելի է հիմնուել՝ ելնելով բնականաբար մեր լեզուի զարգացման ներկայիս պայմաններից եւ միտումներից:

5. ԺԴ դ. առաջին տասնամեակից սկսած՝ հայոց լեզուի մէջ տեղ են գտնուում լատիներէնի օրինակով կազմուած ձեւեր եւ իրողութիւններ, որոնք իբրեւ օտար եւ արհեստական միջամտութեան արդիւնք իսպառ յաղթահարուած են միայն ԺԸ դ. սկզբներից մինչեւ 80-ական թուականներն ընկած ժամանակամիջոցում<sup>9</sup>: Հայերէնի նման մաքրագործումը Մխիթարեանների կարեւորագոյն նուաճումներից մէկն է: Այս խնդիրն առաջադրել էր դեռեւս Մխիթար Սեբաստացին, որն էլ պատուախնդրօրէն իրագործեցին նրա բանիբուն աշակերտները: Հայերէն գրաւոր լեզուի մէջ ներթափանցել էին միայն յոգնակի թուով հանդէս եկող գոյականների համար արհեստական եզակի թուի ձեւ ընտրելու (հմմտ. գիրք-գիրք), գոյականի ներգոյական հոլովի համար ոչ բնական ձեւ յօրինելու (հմմտ. ի քաղց եւ ի ծարաւ - ըն սովում եւ ըն ծարաւում), ածականի բաղդատական եւ գերադրական աստիճանների միայն եւ միայն -գոյմ եւ -գումնեղ մասնիկներով կազմելու (հմմտ. լաւ - լաւագոյմ-լաւագումնեղ), բայի մէջ կրաւորական խոնարհման անցեալ անկատարի բռնազբօսիկ ձեւ առաջադրելու (հմմտ. առնում - առնամիւմ, գրէի - գրեւէի, գրիցէի), ոչ անհրաժեշտ, լրացուցիչ նախդիրների գործածութեան, շարահիւսական յարաբերութեան մէջ գտնուող միաւորների (յատկապէս որոշիչ-որոշեալ կապակցութեան) պարտադիր համաձայնութեան միտումներն ու հակումները:

<sup>9</sup> Աւելի մանրամասն տե՛ս ԼԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Վ., Գրաբարի լատիմատիպ նորամուծութիւնների յաղթահարումը ԺԸ դարում: Նոյնի՝ Գրաբարի գործառութիւնը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 86-97:

Այս հարցն ունէր նաեւ իր հակառակ կողմը. ի՞նչ եղանակով մաքրագործել լեզուն այդպիսի խորթութիւններէց: Մեր ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Մխիթարեան լեզուագէտ մշակները նախ թուլացնում եւ նուազեցնում, այնուհետեւ իսպառ դուրս են թողնում նման երեւոյթների դրանք փոխարինելով աւելի հայեցի, այսպէս կոչուած բուն «հայկաբան» ձեւերով ու միջոցներով: Անհրաժեշտ ենք համարում նշելու, որ այս գործում մեծ աւանդ ունեն Վրթ. Ասկէրեանը եւ Միք. Չամչեանը, որոնք էլ իրենց ինքնուրոյն երկերում եւ թարգմանութիւններում իրագործեցին մեծ ուսուցչի պատուիրանը: Իսկ վերջինս մի առիթով ձեւակերպուած էր հետեւեալ կերպ. «Բայց զի մի քամահօղք բեղմնաւորաց աշխատութեանց թարգմանչաց սորին գտանիցիմք, զանցս արարաք զայնոքիւք ոմամք, որք ոչ ըստ նորոյ քերականութեանց են եղեալք, ի վերացմունս բայից եւ կամ ի յայլս, զի այնոքիւք զօրութիւն բանից ոչ վնասին, այլ մանաւանդ քաղցրաբանութիւնք պատճառին, առ յոր քախճան նախնիք մերք եւս թոյլ ետուն, եւ փոխանակ դնելոյ որոշեցեալ, գոյնաւորեցեալ, լնանեցեալ եւ այլք նմանք, եդին՝ որոշեալ, գունաւորեալ, լցեալ: Եւ փոխանակ դնելոյ սրբոց գրոց, բարեաց արանց, եդին՝ սուրբ գրոց, բարի արանց եւ այլք նմանք: Վասն որոյ աղաչեմք զընթերցօղս վարդապետն, զի զնուաստութիւն մեր, որ քան առ յայնս անբասիրս արասցեն, զի ոչ թէ ոչ ճանաչելոյ զայնպիսիան զանց արարաք, այլ զի մի ամբարտաւանք գտանիցիմք զվաստակս նախնեաց խախտելով, քան զոր չիք յանդանագոյն, թոյլ թողաք մնալ եւ մանաւանդ մինչեւ գոյացութեան բանին զոչ իմն վնաս առ բերէին» (ընդգծումները մեր են - Վ. Հ.)<sup>10</sup>:

Ըստ այսմ, կարծում ենք, որ նախանցեալ դարի լեզուամշակութային գործը, առաջին մեծ ձեռքբերումը հայերէնի մէջ անհարկի տեղ գտած լատինաբան բառերի, ձեւաբանական միաւորների, շարահիւսական կառոյցների դուրս մղելն էր: Վերջինս նաեւ հնարաւորութիւն էր ստեղծում նոր ժամանակներում գործածուող գրաւոր լեզուն հասցնելու նախնական վիճակին, առնուազն Ե-ԺԱ դարերի գրաբարի լեզուական որակին: Այս հար-

10 Համառօտութիւն աստուածաբանութեան երամկոյն (Մեծիմ Ալպերտի, ի լոյս ածեալ Մխիթարայ Սեբաստացոյ, Վենետիկ, 1715, էջ 3:

ցում հայերէնագիտութիւնը պարտական է Մխիթարեան միաբանութեան երանելի վարդապետներին:

Աւելին, այդ հարցում Մխիթարեաններն աւելի առաջ գնացին այսինքն՝ նրանք իրենց երկերում եւ թարգմանութիւններում գործածեցին մի այնպիսի խնամուած լեզու, որն աւելի հարուստ էր գործառնապէս, որն առաւել կառուցիկ էր ձեւաբանօրէն եւ շարահիւսական առումով, քան հին ժամանակներում, երբ գրաբարը գործառում էր իբրեւ կենդանի, ընդհանուր գրական լեզու: Այս հանգամանքը խիստ ուշագրաւ է արդի հայերէնի գրական երկու տարբերակների կանոնարկման տեսակէտից: Յետուելով ոչ միայն Մխիթարեանների, այլեւ մեզանում երեւան եկած հայերէնագիտական միւս դպրոցների ստեղծուած աւանդութի վրայ՝ մեր օրերում եւս անհրաժեշտութիւն կայ արտաքին բարեխնամ միջամտութեամբ կանոնաւորելու, առաւել եւս միասնականացման ուղու վրայ դնելու մեր նոր գրական լեզուի երկու տարբերակները: Վերջիններս ներկայացնում են այնպիսի տարամիտումներ, որոնք կարելի է առանց դժուարութեան յաղթահարել: Նկատի ունենք յատկապէս ուղղագրական-ուղղախօսական տարբերութիւնները (հմմտ. գրքի-գիրքի, գրքերի-գիրքերու, ժողովրդի-ժողովուրդի), ձեւաբանական մակարդակում նկատուող առանձնակիութիւնները (հմմտ. գիտակցումով-գիտակցումովը, քերել էի-քերեր էի, մարմնի-մարմինի), բառակազմական եւ իմաստաբանական երեւոյթների հետ կապուած առանձնացումները (հմմտ. առնչութիւն-առընչութիւն, արձագանք-արձագանգ, միշտ-միշդ, ձգել «քաշել»-ձգել «գցել, թողնել»), շարահիւսական մակարդակի զուգահեռութիւնները եւ այլն: Այս եւ նման կարգի տարբերութիւնները, ինչ խօսք, օտար ազդեցութեան արդիւնք չեն, այլ բարբառային տարբեր հիմքերից եկող ձեւացումներ, որոնց միասնականացումն, անշուշտ, աւելի դիւրին եւ անխափան կանոնաւորմամբ կարելի է իրականացնել:

6. Նախանցեալ դարի 10-ական թթ., երբ արտաքին աննպաստ պայմանների բերումով միմեանցից զատուում են Մխիթարեանները՝ կազմելով երկու ճիւղ, վիե՛ննական թեւի գործիչները լեզուական հարցերում, այսինքն՝ նոր լեզուի ընտրութեան, վերջինիս մշակման ու կատարելացման խնդիրներում առաջ են քաշում բոլորովին ինքնուրոյն մօտեցում: Վերջինս նորից բախուում էր իրենց մեծ ուսուցչի նախանշած սկզբունքներին, այն է՝

նոր լեզուն կամ աշխարհաբարը, եթէ այն դառնալու է ընդհանուր գրական լեզու, պիտի մշակուի ու կանոնարկուի ոչ թէ առհասարակ գրաբարի, այսինքն՝ Ե-ԺԱ դդ. մեր նախնեաց լեզուի, այլ նրա աւելի մաքուր եւ բնաշխարհիկ տարբերակի՝ դասական, այն է՝ Ե դ. առաջին վեց տասնամեակներում գործածուած լեզուի օրինակով: Վիեննական դպրոցի ներկայացուցիչները գրաբար սովորում էին ընտիր բնագրերի տուեալների հիման վրայ, քերականական երեւոյթներից նախապատուութիւնը տալիս էին «դասական գրաբարին», որն իրենց իսկ յայտնաբերածն էր ու գիտականօրէն հիմնաւորածը:

Այս մեծ ձեռնարկման նախակարապետը եղել է Վրթ. Չալըխեանը, որ ժամանակին գրել էր գրաբարի թէ՛ տեսական եւ թէ՛ գործնական քերականութիւն, Պոլսում իր ձեռքի տակ կրթել մի սերնդի, որն այնուհետեւ անցնելով միաբանութեան յարկից ներս ձեռնամուխ է լինում հայոց լեզուի պատմութեան համակողմանի ուսումնասիրման, գրաբար մատենագրութեան լեզուական մանրակրկիտ քննութեան: Մենք ժամանակին ճշգրտել ենք, որ Վրթ. Չալըխեանի տեսական քերականութիւնը տպագրուել է ոչ թէ ինը, ինչպէս լայնօրէն եւ յաջորդաբար նշում է բանասիրութեան եւ լեզուաբանութեան մէջ, այլ տասնմէկ անգամ, այն էլ ոչ միմեանցից հեռու ընկած տարիների ընթացքում: Չալըխեանի տեսական եւ գործնական քերականութիւնները հայերէն սովորողների մէջ մտցրել են ճաշակ հայոց լեզուի մաքրութեան, գրական նորմաւորութեան, ինչպէս նաեւ գրաբար ընտիր բնագրերի վերաբերեալ<sup>11</sup>: Աւելին, ճաշակն այնքան վճռական չի եղել «դասական գրաբարի» գիւտի համար, որքան որ Չալըխեանի ձեռքի տակ հայերէն սովորած Մխիթարեան աշակերտները Ե դ. առաջին կէսի եւ յետագայ վիճակների գրաբարի միջեւ տեսնում են բառապաշարի եւ քերականական կառուցութեան տարբերութիւններ: Այս տեսակէտից միանգամայն տեղին է յիշել Հ. Գաթըրճեանի մի դիտողութիւնը, որն այնպէս էլ անյայտ է մնացել «դասական գրաբարի» գիւտը չընդունող լեզուաբաններին. «Չէ, մեր յիշած նոր դիտողութեանց մէջ ճաշակը որոշիչ չէ:

11 Աւելի մանրամասն տես՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Վ., Վրթամէս Չալըխեանը եւ «դասական հայերէնը»: Նոյնի՝ Հ. Վրթամէս Չալըխեանը եւ վիեճակամ հայերէնագիտութիւնը, «Հանդէս ամսօրեայ», 1995, էջ 360-379:

Բառարանով եւ քերականութեամբ միանգամայն է, որ հիմնովին երկուսի կը բաժնուի հայերէն գրաբար լեզուն... զանոնք իրարմէ բաժանողը այնչափ ժամանակը չէ, որչափ դպրոցը կամ ուսումն է, որով վերջինները յունական լեզուի երկարագոյն եւ կատարելագոյն հրահանգ առած են» (ընդգծումը մերն է - Վ. Հ.)<sup>12</sup>:

Եւ ըստ այդմ էլ վիեանացիները ծաւալեցին մեծ աշխատանք՝ թէ ինքնուրոյն երկեր գրելիս, թէ նոր թարգմանութիւններ անելիս, հանդէս բերեցին մեծ եռանդ ու նուիրում թէ՛ հայ հին մատենագրութեան նմոյշները նոր պայմաններում հրատարակելիս, թէ՛ դրանց լեզուն յետագայ դարերի ընթացքում սպրդած անհարազատ ձեւերից ու իրողութիւններից մաքրելիս: Այս գործում մեծ լուծայ ունեն յատկապէս Յ. Գաթրըճեանը, Ա. Մ. Գարագաշեանը, Պ. Յովնանեանը եւ շատ ուրիշներ: Նրանք իրագործեցին ոչ միայն Մխիթար Սեբաստացու, այլեւ իրենց իսկ անմիջական ուսուցչի՝ վաղամեռիկ, սակայն պայծառ անուն թողած Վրթ. Զալըխեանի պատուիրածն ու սովորեցրածը:

Ուստի կարծում ենք, որ Մխիթարեան միաբանութեան լեզուագիտական եւ լեզուամշակման անխոնջ գործունէութեանն ենք պարտական նրանում, որ արդի հայերէնն այսօր ունի հարուստ, ճկուն բառապաշար, մանաւանդ գիտութեան եւ այլ բնագաւառների տարբեր ճիւղերի վերաբերող եզրաբանութիւն: Վերջինս իր հիմնական մասով այսօր եւս գործածական է, կենդանի, իսկ որքան շատ է այն մասը, որը մի տեսակ մոռացութեան է մատնուած, ինչ-ինչ պատճառներով դուրս է մնացել լայն գործածութիւնից ոչ միայն յետագայ դարերում, այլեւ մեր օրերում: Արդի հայերէնի գրական երկու տարբերակների բառապաշարի կանոնակարգման, նորագոյն փոխառութիւնները հայեցի ձեւերով փոխարինելու դէպքում զգալապէս կարելի է օգտուել Մխիթարեանների կերտած եզրերից ու բառային անուանումներից՝ դրանց հաղորդելով ինչ-որ չափով նոր արժէք եւ բովանդակութիւն: Զի բացառում նաեւ տուեալ դէպքում նրանց մշակած բառակազմական սկզբունքներին հետեւելը: Աւելացնենք, որ նման եզրաբանութեամբ աչքի են ընկնում Ղեւոնդ Ալիշանի գրեթէ բոլոր երկերը, ինչպէս նաեւ «Բազմալէպ» եւ «Հանդէս ամսօրեայ» պարբերականները, որոնք հայոց լեզուի եզրաբանու-

12 Տե՛ս «Համդէս ամսօրեայ», 1913, էջ 720:

Թեան պատմութեան տեսակէտից մինչեւ օրս չեն արժանացել որեւէ ուշադրութեան՝ իբրեւ առանձին ուսումնասիրութեան առարկայ:

Մենք ժամանակին առանձին աշխատանքներով անդրադարձել ենք վեներտիկեան եւ վիեննական դպրոցների ստեղծած այն նոր բառերին, որոնք արդի գրական հայերէնի բառապաշարի անկապտելի մասն են կազմում: Դրանք հիմնականում գործածական են նաեւ մեր օրերում եւ այնքան սովորական են դարձել, որ կարծես եղել են դեռեւս հնագոյն ժամանակներում երեւան եկած գրաւոր յուշարձաններում: Աւելին, որոշ լեզուաբաններ, ծանօթ չլինելով Մխիթարեանների կազմած նոր բառերին ու եզրերին, դրանք չգտնելով գրաբարի յայտնի բառարաններում (մի բան, որ չէր կարող լինել), թիւրիմացաբար կարծել են, թէ դրանք աւելի ուշ կազմութեամբ բառեր են: Այս ամէնը բացատրում է այն հանգամանքով, որ Մխիթարեանների գործադրած բառակազմական եւ բառակերտման սկզբունքները գրեթէ միշտ եղել են հայեցի, գրաւոր լեզուի տեւական՝ աւանդոյթի վրայ ներդաշնակօրէն հիմնուած: Այսպէս, օրինակ, Ս. Աղամալեանի եւ Ս. Պրոնեանի երկրաչափութեան եւ եռանկիւնաչափութեան դասագրքերը, Ղ. Ուղուլուղեանի նաւագնացութեանը վերաբերող գիրքը պարունակում են այնպիսի նոր եզրեր եւ բառային անուանումներ, որոնք այսօր եւս ունեն լայն գործածութիւն: Դեռ նախանցեալ դարի կէսերին այդ եզրերն ու բառային անուանումները եկան փոխարինելու յունարէն եւ լատիներէն կազմութեամբ եւրոպական լեզուներում գործածուող եզրերին եւ բառային անուանումներին, եւ որոնց կիրառութեան անհրաժեշտութիւնը կար հայերէն համապատասխան բնագրերում եւ գրքերում:

Եւ այս նկատառումով ուզում ենք յատուկ նշել, որ մեր օրերի գիտութեան եզրաբանութեան եւ առհասարակ նորագոյն բառապաշարի մշակման եւ կարգաւորման գործում, եթէ այդ խնդրի լուծմանը հնարաւորութիւն ունենանք խստօրէն հետեւելու, կարող ենք որոշակի չափով օգտագործել նաեւ Մխիթարեանների կերտած եւ ժամանակին գործածութեան մէջ դրած այն եզրերն ու բառային անուանումները, որոնք յետագայում երեւան եկած պայմաններում մոռացութեան են մատնուած եղել: Աւելին, նոր ժամանակների լեզուագործունէութեան մէջ որոշա-

կի չափով կարելի է նկատի ունենալ հայերէնագիտական այդ դպրոցի լաւագոյն փորձը, օգտագործել նրանց առաջ քաշած այն սկզբունքները, որոնք մշակուած են եղել մեր լեզուի պատմութեան տեւական աւանդոյթով: Դրանցով իսկ, վստահաբար կարելի է ասել, որ կարող է առաւել արդիւնաւէտ լինել արդի գրական հայերէնի մշակման ու կանոնարկման ամէն մի ձեւնարկում:

7. Արդի գրական հայերէնի ընդհանուր, այլեւ, բառային մշակման ու նորմաւորման տեսակէտից միանգամայն-տեղին եւ բնական կարող է լինել այնպիսի նոր մօտեցման մշակումը, որը թոյլ կը տայ նոր եզրերի եւ բառային անուանումների կազմութեան հարցում հաշուի առնելու նաեւ Մխիթարեանների նուաճումները: Չէ՞ որ նրանք իրենց ժամանակին, այլեւ ինչ-որ չափով նաեւ յետագայում այդ գործին ձեւնամուխ են եղել լեզուական մեծ հոգածութեամբ, հետեւել են մեր լեզուի բնականոն ընթացքին, կարողացել են լեզուական ձեւերի՝ հնչիւնական, բառային, քերականական եւ այլ կարգի միաւորների տարբերակներից մէկի կամ միւսի ընտրութեան հարցում նախապատուութիւնը տալ աւելի հարազատ, հայեցի մտածողութեանը առաւել բնորոշ տարբերակներին: Այս իրողութիւնը բացորոշ կերպով նկատելի է նրանց լեզուամշակման սկզբունքների եւ դրանց գործադրման աւանդոյթի բազմաթիւ դրսեւորումների մէջ, նրանց լեզուաքաղաքական գործունէութեան ողջ ընթացքում:

Արդի գրական հայերէնի յետագայ կանոնաւորման եւ կատարելագործման հարցում արտալեզուական միջամտութեան համար բաւականին նպաստաւոր կարող է լինել Մխիթարեանների լեզուամշակութային գործունէութեան օրինակը: Ճիշտ է, վերջինս միակը չէ եւ ոչ էլ բացարձակ չափանիշ կարող է հանդիսանալ, սակայն դրանով նաեւ լիովին պահպանուած կարող է լինել լեզուական ժառանգորդութիւնը: Լեզուների պատմութիւնը ցոյց է տալիս, որ զարգացման միտումներն ու դրսեւորումները կենսունակ են լինում ամէնից առաջ ժառանգորդութեան եւ աւանդոյթի հիմքով: Հայոց լեզուի պատմութիւնն այս առումով չի առանձնանում եւ չի կարող նաեւ բացառութիւն լինել: